

ԳՐԻԴՈՐ ԱՐԾՐՈՒՆԻՆ ԵՎ ՌՈՒՍ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ե. Մ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

Բաճառիբալան գիտությունների դպրոց

Հայ դրականության զարգացման հեռանկարները պարզելիս, գրականության հասարակական նշանակության, արդիականության հարցերին, գրական ուղղություններին անդրադառնալիս, Արծրունին հաճախ է դիմել ուսուցողների ստեղծագործություններին։ Առանձնապես կարևոր են նրա հոգնածներն ու մտքերը Պուշկինի, Լերմոնտովի, Գոգոլի, Տուրգենևի, Նեկրասովի, Գոնչարովի, Շչեդրինի մասին։

Հայ և ուսուցողությունների դրական-մշակութային կապերի ընդլայնման, փոխադարձ ազդեցությունների հիմքը Արծրունին իրավացիորեն համարում էր քաղաքական այն նոր իրադրությունը, որ ստեղծվեց դարասկզբին Անդրկովկասի միացմամբ Ռուսաստանին։ «Անհրաքելի է, — գրում է նա, — որ կապված լինելով ուսուցողական հետ թե՛ քաղաքականապես և թե՛ բարոյապես մեր հասարակական օրգանական երևույթները սաստիկ նման են ուսուցողական հասարակական երևույթներին»¹։ Նշելով Անդրկովկասի, հայ կյանքի սերտ կապը Ռուսաստանի հետ, Արծրունին հանգում էր գործնական հետևությունների՝ թարգմանական պիեսներ բեմադրելիս նախ դիմել Գոգոլին և Օստրովսկուն, մայրենի լեզվի ուսուցմանը զուգընթաց՝ շո՛րհառալ ուսուցողական հրաժեշտությունը։ «Թե՛ օրինակ ուսուցող լեզուն պետական էլ չլինեք, — գրում է Արծրունին, — մենք հայերս դարձյալ կսովորենք նրան, որովհետև նա միջնորդ լինելով մեր և եվրոպական գիտության մեջ, հարուստ կրթողական նյութ է առաջարկում մեզ»²։ Իր հասարակական, հրապարակախոսական գրական գործունեության ընթացքում Գ. Արծրունին հետևողականորեն վարում էր հայ և ուսուցողությունների դրական, մշակութային կապերի ընդլայնման և ամրապնդման գիծ։ Անշուշտ դա ուներ և իր քաղաքական շարժառիթները։

XIX դ. 70-ական թվականների վերջերին հայ ժողովրդի առաջ իր ամբողջ բարդությամբ ծառացավ սովթանիզմի արյունոտ լծից արևմտահայության ազատագրման հարցը։ Արծրունին այդ հարցի լուծումը կապում էր բացառապես Ռուսաստանի զինված օգնության հետ։ «Ամբողջ թուրքական Հայաստանը, — գրում էր նա 1877 թ. «Հայաստանը ինչ պետք է դառնա» առաջնորդողում, — սրտով կուզենար միանալ Ռուսաստանին, եթե այդ չի լինելու, թող ինքնավարություն ստանա։ Հայաստանի առաջին նպատակն է պատերազմից հետո ամեն միջոցներով աշխատել Ռուսաստանին, Անդրկովկասին միանալու, իսկ եթե այդ իրագործելի չէ, Հայաստանի հույսը դարձյալ և միմիայն Ռուսաստանի վրա է, որն իր հզոր ձեռքով կօգնի հայերին իրենց անհրաժեշտ, մինչև այժմ բռնադատված մարդկային իրավունքները ետ ստանալու, կաղատեթուրքաց տիրապետությունից, չի ուզի թողնել բազմաշարժար հայոց ազգը

¹ «Մշակ», 1880, № 200։

² Նույն տեղում, 1873, № 18։

Թուրքիայի անպատմում ճնշման տակ, մեկ խոսք կասեք և ...հայերը կստանան բուլղարների պես իրենց ինքնավարությունը: Այսպես թե այնպես մեր ամբողջ հույսը Ռուսաստանի վրա է: Նշենք, որ պատերազմի հետևանքով առաջացած իրադրության մեջ Արծրունու վարած քաղաքական գիծը միանգամայն ձիշտ էր:

Գրիգոր Արծրունին ղեկավար մտածող էր, նրա ռուսասիրությունը հասարակական խոր արմատներ ուներ և բխում էր հայ ժողովրդի կենսական շահերից:

Հայ գրականության մեջ իր դավանած ուղղության՝ ղեկավարի զարգացման և ամրապնդման համար Արծրունին հաճախ էր գիմում ռուս ակադեմիկոս գրողների ստեղծագործություններին՝ ոչ միայն այն պատճառով, որ նա շատ լավ գիտեր ռուսաց լեզուն, ռուսական կյանքն ու իրականությունը, ռուս գրականությունը, այլև այն բանի համար, որ քննադատական ղեկավար XIX դամենից ավելի փարթամորեն Ռուսաստանում ծաղկեց: Ժամանակի հայ գրողներից պահանջելով իրականության անսքող արտացոլում, Արծրունին ռուս գրականության օրինակով հաստատում էր, որ «կյանքի ճիշտ պատկերը» ամենից առաջ նշանակում է ղեկավարական ստեղծագործություն, ազգային (հետևաբար և համամարդկային) հավաքական, ընդհանրացված տիպերի կերտում: Կյանքի ճիշտ պատկերը սերվում է իրականությունից և պատմական որոշ շրջանի ծնունդ է: Գոգոլի «Մեռած ոգիները», Գրիբոյեդովի «Խելքից պատուհասը» կամ Սունդուկյանցի «Խաթաբալան», — գրում է Արծրունին, — իրանց ժամանակի կյանքից վերցրած ճիշտ պատկերներ են... Բայց ինչու՞ դրանք ճիշտ պատկերներ են, հարցնում է քննադատը և պատասխանում. «Եթե Սունդուկյանցի նկարագրածը մի անգամ միայն պատահած լիներ, այն է, որ մեր միջին դասակարգի ծնողները իրանց աղքատ մարդու տալով սաղացնում են փտած ապրանքի պես, ցույց տված լավ ապրանքի տեղ — դա մեր կյանքի (այն էլ քսան-երեսուն տարի առաջ) ճիշտ պատկերը չէր լինի: Եթե Գոգոլի ժամանակ ամբողջ Ռուսաստանը լի չլիներ Չիլիկովի և Նոզդրևի պես անձնավորություններով, Գոգոլը չէր կարող դիտել նրանց և բոլորից ստեղծել մի Չիլիկով կամ մի Նոզդրև: Եթե Գրիբոյեդովի ժամանակ ամբողջ Ռուսաստանում միայն մի հատ մարդ լիներ, որը՝ Ֆամուսովի հետ նմանություն ունենար, Գրիբոյեդովը չէր կարող ստեղծել Ֆամուսովի տիպը, կամ նրա ստեղծածը անբնական, ապարդյուն կլիներ»³...

Գրականությունը համարելով հասարակական երևույթ, Արծրունին գեղարվեստական կերպարը ևս դիտում է որպես այդպիսին, նրա բնավորության բացասական գծերը վերադրելով այն հասարակությանը, միջավայրին, որի արդյունքն է տվյալ կերպարը: «Բնական տիպերը...», — գրում է Արծրունին, — միշտ կարող են և պետք է լինեն գեղարվեստի ուսումնասիրության առարկա: Բայց անբնական, հիվանդոտ, հոգեպես տկար անձնավորությունները ներկայացնում են մեզ երևույթներ, որոնք ոչ թե հասարակական այս կամ այն կազմակերպության հետևանք են, այլ անձնական, անբնական հոգեկան դրություն: Եվ այդ վերջիններին գեղարվեստը չէ կարող իր ուսումնասիրության առարկա դարձնել, այլ դրանք կարող են միմիայն պսիխիտոր բժշկի ուսումնասիրության առարկա դառնալ»⁴:

³ Նույն տեղում, 1891, № 143:

⁴ Նույն տեղում, 1887, № 52:

Ռուս գրականության ռեալիստական դպրոցի այս առողջ սկզբունքի պաշտպանության դիրքերից ելնելով, Գրիգոր Արծրունին խստորեն քննադատում է իրականության պարզունակ, նատուրալիստական արտացոլումը դրամատուրգ Շպաժինսկու «Майская» պիեսում:

Ռուս մեծ գրողների մասին Արծրունու հոգվածներն ու մտքերը աչքի են ընկնում իրենց ընդհանրացումներով, կարևոր եզրահանգումներով, որոնք բացահայտում են քննադատի մտքի խորությունը, նյութի իմացությունը: Այսպես, խոսելով Պուշկինի, Լերմոնտովի և Նեկրասովի մասին, Արծրունին երեքին էլ լինորոշում է որսյես մարդկության առաջադիմությանը նպաստող հեղինակներ, որոնց երկերը «շնչում են ազատամիտ ոգով, հառաջադիմ գգացումով, հեղուկության և խավարի դեմ ունեցած բողոքող ուղղությամբ»:

Ամեն մի գրող ժամանակի ծնունդ է: Ժամանակի արդյունք է նաև գրողի ստեղծագործությունը: Այդպիսի հեղինակներ են Պուշկինն ու Լերմոնտովը, որոնց Արծրունին իրավացիորեն համարում է «իրանց ծանր մթնալուսի զոհեր»:
«Ռուս բանաստեղծներին կարծես վիճակված է մեռնել երիտասարդ հասակում, իրանց հանճարի հասունությանը չհասած, նրանց վիճակված է կարծես երկար շժառայել ուսուցիչ միտքը խավարի կապանքներից ազատելու գործին»:

Հայ գրականության մեջ ռեալիստական ուղղության հաստատման, ամրապնդման և հաղթանակի առումով Արծրունին առանձնակի սիրով խոսում է Գրիբոյեդովի մասին: Նա շերմորեն ողջունում է Գրիբոյեդովի «եկերից պատուհաս» կոմեդիայի բեմադրությունը հայ թատրոնում: Հիշյալ կատակերգության հասարակական բովանդակությունը Արծրունին իրավացիորեն համարում է «անհաշտ պատերազմը» հին և նոր սերնդի ներկայացուցիչների՝ Ֆամուսովի և Չացկու միջև: Հին սերնդի դեմ ծառանում է «ազատախոս» Չացկին: Հինը դեռ գերիշխում է, ամուր է, ուստի և ուժեղ են հին սերնդի ներկայացուցիչները՝ Ֆամուսովը, Մուլլախինը: Նորը դեռ թույլ է. այստեղից էլ նախորդների հետ համեմատած Չացկու՝ որպես կերպարի թուլությունը: Չացկու կերպարը քննադատին տեսական խոհերի տեղիք է տվել, ի՞նչ գրական տիպը գեղարվեստական ընդհանրացում է, բազմաթիվ միանմանների հանրագումարը, արդյոք բացառիկը, հազվադեպը կարո՞ղ է տիպ լինել: Արծրունին սկզբում հարցին տվել է բացասական պատասխան («Չացկին տիպ չէ»): Սակայն հետագայում, Գ. Սոնդուկյանի «Ամուսինների» մասին գրած հոգվածում, հայ գրականության ընձեռած կոնկրետ գեղարվեստական փաստի հիման վրա, հանգում է այն ճիշտ եզրակացության, թե բացառիկը ևս կարող է տիպ լինել: «Ընդունում եմ, որ բողոք, դիմադրություն անողները քիչ են, սակավաթիվ են, բացառիկ երևույթներ են, բայց չէ՞ որ դրանք ինչքան էլ սակավաթիվ լինեին՝ ընդհանուր կազմակերպության արտադրություններ են... Զէ՞ որ անհատական բողոքների գոյությունը մատնացույց է անում ընդհանուր, թեև խուլ ցավի վրա, չէ՞ որ եթե դժգոհությանը պատրաստ հող չլիներ, չէին էլ հայտնվի մասնավոր բողոքողներ»⁵: Առանձնապես կարևոր են Արծրունու մտքերը ուսման գրականության քննադատական ռեալիզմի ալիսիսի հանճարեղ դեմքերի մասին, որպիսիք են Գուգուրը, Օստրովսկին, Տուրգենևը, Շլեգերին, Դունլարովը, որոնց երկերը տո-

5 Նույն տեղում, № 11: (Այս և հետագա ընդգծումները մերն են—Ե. Պ.):

6 Նույն տեղում:

7 Նույն տեղում, 1890, № 15:

գորված են անողոր քննադատությամբ՝ «հնության և խավարի դեմ ունեցած գողոթի ուղղության»։ Գրիգոր Արծրունին իր գլխավորած ուղղությունը համարում էր մտահաղթ, բազմազգ, ինքնաքննադատության ուղղությունը, որով պետք է ներթափանցված լինեն գրականությունը, մամուլը, արվեստի բոլոր ճյուղերը։ Քննադատությունը պետք է ուղղված լինի հնության, հետամնացության, խավարի դեմ, այն ամենի, ինչ կաշկանդում է հասարակական առավել առաջադեմ հարաբերությունների արմատավորումը։ Գրիգոր Արծրունին հենց սկզբից հանդես եկավ քննադատական ռեալիզմի անվերապահ պաշտպանությամբ։ Մեր ժամանակում,— գրում է նա դեռևս 1868 թ.,— հասարակության մեջ կան և պակասություններ, կա և անբարոյականություն, ուրեմն հասարակության մեջ կա և հարկավորություն քննելու յուր սեփական պակասությունները, քննելու յուր կյանքը, և նորա մեջ ևս կազմվում են այնպիսի մարդիկ, որոնք յուրյանց խելքը, ընդունակությունը գործ են ածում այդ պակասությունները ներկայացնելու։ Այս կարգի գրողներին նա համարում էր ամենաերևելի գրողներ և թվարկում էր նրանց անունները՝ «Անգլիայում Դիկկենս, Ռուսաստանում Գոգոլ և Պուշկին, Ֆրանսիայում Պոլ դը Կոկ և Դյումա որդի»։ Ուստի, զարմանալի չէ Արծրունու ջերմ սերն ու համակրանքը ռուս գրականության մտրակող ուղղության այնպիսի հսկաների նկատմամբ, որպիսիք են Գոգոլը, Շչեդրինը, Օստրովսկին։

Արծրունին Գոգոլին բնորոշում է որպես «երևելի մարդ», «մեծ մարդ», որ անընդհատ կատարելագործել է իր գրական վարպետությունը. «նա մեծ մարդ դարձավ ռուսաց ժողովրդական կյանքից վերցրած իր վեպերով»։ Ռուսական կյանք, ռուսական իրականություն, ահա Գոգոլի ստեղծագործության ներշնչարանը, նրա ռեալության անսպառ աղբյուրը։ Գոգոլը, ըստ Գրիգոր Արծրունու, ռուս գրականության մտրակող ուղղության ամենացայտուն ներկայացուցիչն է։ Ռեալիզմ, ճշմարտացիություն, գեղարվեստական համապարփակ կերպարներ,— ահա ռուս հանճարեղ գրողի արվեստի մի քանի առավել բնորոշ կողմերը։ Արծրունին Գոգոլի երկերը փրավամբ բնորոշում է որպես «կյանքի նիշտ պատկերներ»։

Ռուս գրականությունը փայլում է ոչ միայն իրականության ճշմարտացի արտացոլմամբ, գեղարվեստական կատարելությամբ, կենսական գաղափարներով, այլև շնչում է առդիակաճությամբ։

Վերջին տարիների ռուսաց գրական կյանքի մեջ միմիայն երկու գրողներ ենք ճանաչում,— գրում է Արծրունին,— որոնք եղել են իրանց ամբողջ կյանքում արտահայտիչ Ռուսաստանի հասարակական կյանքի բոլոր օրական պահանջների և կենսական խնդիրների, դրանք են Տուրգենևը և Շչեդրինը։ Արծրունին այս երկու հեղինակներին անդրադարձել է բազմիցս։ Երբ հարկ է եղել հաստատելու գրականության և կյանքի կապը, գրականության ազգային բնույթը, նա միշտ, որպես դասական օրինակ, հիշատակել է Տուրգենևի անունը, իսկ երբ կարիք է զգացել ընդգծելու և հաստատելու մտրակող ուղղության՝ քննադատական ռեալիզմի անհրաժեշտությունը, մատնանշել է Շչեդրինի անունը։ Երկուսն էլ թանկ ու սիրելի անուններ են, երկուսն էլ մեծ և հանճարեղ հեղինակներ։ Գրիբոյեդովի և Պուշկինի, Գոգոլի և Օստրովսկու, Դոնշարովի և Տուրգենևի, Շչեդրինի ու Նեկրասովի ստեղծագործությունների մեծագույն արժա-

⁸ «Գրիգոր Արծրունու աշխատությունները», հ. 1, Թիֆլիս, 1904, էջ 96—97,

նիքը, հասարակական-դաստիարակչական նշանակությունը Արծրունին համարում էր նրանց երկերի ժամանակակից բնույթը, արդիական ճնշեղությունը:

Գրողը պետք է բալլի կյանքին համընթաց: Նրա երկերը պետք է արձագանքեն իրականության հարուցած հրատապ հարցերին և նպաստեն կյանքի վերափոխմանը: Ժամանակակից վեպի ուժը Արծրունին համարում էր այն, որ վեպը «կա՛մ դրդում է նոր մտքեր և կա՛մ մտրակում է վնասակար երևույթները»: Իր միտքը հաստատելու համար նա գրում է. «Երբ որ Ռուսաստանում հարուցվեցավ ճորտերի ազատության խնդիրը, Տուրգենևը գրեց. «Записки ОХОТНИКА», երբ որ Ռուսաստանում հայտնվեցան նոր ձևի մարդիկ, այսինքն խոսքի, բայց ոչ գործի մարդիկ, ռուս երեկի հեղինակը ստեղծեց իր Ռուդինի տիպը, երբ նիհիլիստների տիպեր հայտնվեցան ռուս հասարակության մեջ. Տուրգենևը գրեց իր «ОТЦЫ И ДЕТЯ» ռոմանը, որի մեջ մտրակեց այդ տեսակ երիտասարդությանը Բազարովի տիպը ներկայացնելով»⁹: Մի այլ առիթով, խոսելով Սունդուկյանի «էլի մեկ զոհ» կատակերգության հին և նոր սերնդի պայքարի մասին, նշում է նոր սերնդի ներկայացուցիչների թուլությունը և պայքարելու անվճռականությունը: Դրան հակառակ՝ հին սերնդի մարդիկ ուժեղ, կոռ, ամբողջական տիպեր են: Այդ համարելով բնականոն երևույթ, Արծրունին իր միտքը հաստատում է Տուրգենևի «Հայրեր և զավակներ» վեպի օրինակով. «Ուշադրության արժանի է, որ ռուս հասարակության մեջ հին սերնդի տիպերը ավելի ինքնուրույն են, քան թե նոր սերունդի անձնավորությունները: Այդ բանը պարզ երևում է տաղանդավոր Տուրգենևի ռուս գրողի «Հայրեր և որդիներ» ռոմանի մեջ: Եվ դա շատ հասկանալի է: Ամեն նոր կազմակերպվող հասարակության մեջ այդպես պետք է լինի»¹⁰: Տուրգենևին Արծրունին համարում է ռուս հասարակության կողմից սիրված և Եվրոպայում լայն ճանաչում գտած վիպասան, որի յուրաքանչյուր նոր երկ ոչ միայն գրական արտակարգ երևույթ է, այլև «ճաստափակված դարագլուխ»: Ինչո՞ւ. «Երոզվեցին Տուրգենևի յուրաքանչյուր գրվածք մի տեսակ պատասխան է օրական ամենանշանավոր խնդրին»¹¹: Տուրգենևին նվիրված մահախոսականում Արծրունին առանձնապես ընդգծում է գրողի սերտ կապը ռուսական իրականության հետ, նրան ներկայացնելով որպես ռուս ազգային մեծ գրողի:

«Ռուսները մի ողորմելի ազգություն կլինեին,— գրում է Ի. Ս. Տուրգենևը,— եթե ռուս մարդը Եվրոպայում ուսում առնելուց հետո կորցնեի իր ազգային հատուկ ոգին»: Մեջբերելով մեծ վիպասանի վերոհիշյալ խոսքերը, Արծրունին նույն հոգվածում գրում է. «ճա մնաց իր բոլոր հեղինակությունների մեջ ռուս բանաստեղծ, արտահայտիչ ռուսական օրական, կենսական, բառայական խրեղիմները»:

Դրվատելով Տուրգենևի հանրահռչակ վեպերը, Արծրունին նույն հոգվածում նշում է դրանց արդիական արժեքը, վիպասանին ներկայացնելով որպես ռուսական կյանքի հուզող հարցերը արտացոլող գրողի: Անդրադառնալով «Հանձարեղ հեղինակի» փոքրածավալ երկերին, նա իրավամբ գրում է, որ դրանք «իրանց գեղեցկությամբ, իրանց գեղարվեստական կատարելությամբ, իրանց զգացմունքի նրբությամբ զմայլում են ոչ միայն ռուս, բայց և օտարազգի ըն-

⁹ «Մշակ», 1880, № 10:

¹⁰ Նույն տեղում, 1875, № 20:

¹¹ Նույն տեղում, 1883, № 116:

թերցողին»։ Այս ամենից էլ բխում են մեծ գրողի երկերի «դաստիարակիչ, բարոյականացնող ահագին նշանակությունը ողուսաց ամբողջ սերունդի վրա»։

Նույնպիսի բարձր գնահատության են արժանացել Շչեգրինի, Օստրովսկու, Գոնչարովի և Նեկրասովի ստեղծագործությունները։

Իր գրական-հրապարակախոսական ողջ գործունեության ընթացքում Արծրունին «Մշակում» բազմիցս անդրադարձել է հայ թատրոնի, հայ դրամատուրգիայի զարգացման հարցերին։ Դրա վկայությունն են նրա փայլուն գրախոսությունները և բազմաթիվ հոդվածները։ Այս առիթով նա քանիցս անդրադարձել է ողուս մեծ դրամատուրգ Օստրովսկու ստեղծագործությանը։ «Տաղանդավոր ողուս հեղինակ Օստրովսկին զեղեցիկ կերպով նկարում է այն խավար աշխարհը (темное царство), որտեղ բռնավորությունը, անհատական իրավունքների ճնշումը, հարստահարությունը, գողությունը, խաբեությունը, դավաճանությունը, դիտմամբ հրդեհ գցելը, սուտ սնանկանալը, այդ բոլոր ախտերը և ուրիշ շատերը, որոնք մենք ավելորդ ենք համարում հիշել, բուն են դրել»¹²։

Արծրունին շեշտում է մեծ դրամատուրգի՝ կյանքի խոր ճանաչողությունը, ստեղծագործությունների գաղափարական հարստությունը, ընդգրկման խորությունը, արտացոլման ռեալիստական բնույթը։ Ռուս հասարակության բազմաթիվ սկենսական երևույթներ, հասարակական ընտանեկան հարաբերություններ» Օստրովսկու մոտ, ըստ Արծրունու, պատկերված են «հանճարեղ գրչով», նրա երկերը տոգորված են «հասարակական բարձր գաղափարներով»¹³։

Օստրովսկու մահվան առթիվ գրված Արծրունու մահախոսականում հիանալի բնութագրված է դրամատուրգի ստեղծագործության էությունը, որ և հաստատում է, թե որքան ճիշտ է քննադատը ընկալել նրա երկերի հասարակական բովանդակությունը։ Հիշատակելով դրամատուրգի կյանքի գլխավոր դեպքերը, թվելով նրա կարևոր դրամատիկական երկերը, Արծրունին այնուհետև գրում է. «Իր բոլոր գրվածքների նյութերը հեղինակը վերցրել է իրական կյանքից։ Եթե նկատի ունենանք Օստրովսկու մեծ տաղանդը դիտելու և երևույթները թափանցելու, նկատի ունենանք նրա ընդունակությունը ամենամանրակրթ կիտ կողմերով ներկայացնելու իր հերոսին, կամ այն շրջանը, որի մեջ պտտվում է գործողությունը, նրա բոլոր դրվածքների հերոսների բնականությունը և պիեսների գործողությունների հոգեբանական ճշտությունը, եթե դրան ավելացնենք Օստրովսկու որպես ողուս գրողի ընդունակությունը՝ բուն ողուսաց կյանքը, բուն ողուսաց լեզվով ու ոճով արտահայտելու այդ կյանքն իր պակասություններով, սուր, կրիտիկական անողորմ մտրակող ուղղությամբ բնի վրա ներկայացնելու— այն ժամանակ հասկանալի կլինի այն ահագին նշանակությունը, որ ունի ողուս հասարակության այդ սիրած հեղինակը իր հայրենիքի գրականության մեջ»։

Միջավայրի իմացություն և ռեալիստական արտացոլում, կերպարների արարքների հոգեբանական ճշտություն, մտրակող, քննադատական ուղղություն,— ահա ողուս մեծ դրամատուրգի ստեղծագործության բնորոշ կողմերը։ Այդպիսին պետք է լինի նաև, ըստ Արծրունու, հայ գրողի ստեղծագործությունը։ Նա ընդգծում է Օստրովսկու երկերի ազգային բնույթը, ողուսական իրա-

¹² Նույն տեղում, 1879, № 183։

¹³ Նույն տեղում, 1872, № 31։

կանությունը «ռուսաց լեզվով ու ռճով» արտահայտելու բարձր կարողությունները, կարևոր է նշել, որ քննադատը ռուս դրամատուրգի պիեսներում պատկերված արատներն ու թերությունները պատահական երևույթներ չի համարում, այլ՝ հետևանք պատմական իրողությունների, ծանր, անմխիթար հանգամանքների դասավորության, ժողովրդական մահով, — շարունակում է Արծրունին, — ռուս գրականությունը կորցնում է մի հանճարեղ գրողի... որի անունը ռուսաց գրականության պատմության մեջ իրավամբ կը բռնի Գոգոլի, Պուշկինի, Լեոնովի և Տուրգենևի անունների շարքում»¹⁴:

Գրիգոր Արծրունու վերահիշյալ սեղմ ու բովանդակալից բնութագրման մեջ կարևորն ու արժեքավորը դրամատուրգի ստեղծագործության հասարակական բովանդակության և արվեստի համարիտ բացահայտումն է, այն, ինչ մենք համարում ենք գրական քննադատության հիմնական խնդիրը: Ռուս գրականության մեջ Գոգոլից հետո, մտրակող ուղղության ամենախոշոր գրական դեմքն, ըստ Արծրունու, Սալտիկով-Շչեդրինն է: «Մի մեծ ռուս գրողի մահը» հոգվածում տալով Շչեդրինի ստեղծագործության հիանալի բնութագիրը, Արծրունին ընդգծում է նրա երգիծանքի սթափեցնող ուժը, ժամանակակից բեռնվթը, հետադեմ ուժերի դեմ ուղղված գրողի զորեղ ձայնը:

Շչեդրինի ստեղծագործությունների ոգին Արծրունին համարում է խոր արդիականությունը, որով և նրա երկերը դարձել են «ռուսաց ժամանակակից կյանքի ամենաճանապարհիմ նկարագիրը»: Արծրունու մտքերը Շչեդրինի ստեղծագործության մասին ձիշտ են, բնորոշ և դիպուկ, «Ռուս սատիրան, ռուս երգիծաբանական գրելաձևը, — գրում է Արծրունին, — Շչեդրինից առաջ երբեք չէր հասած այն վեհ ընդարձակության, երբեք այնքան խոր կերպով չէր թափանցել, չէր մտրակել ժողովրդի բոլոր խավերը, որպես այդ կարողացել է անել երեսուն տարի շարունակ Շչեդրինի մերկացնող, անխնա մտրակող սատիրան»:

Արծրունին հակադրվում է բոլոր նրանց, ովքեր Շչեդրինին մեղադրում են խստություն մեջ, նրա ոճը համարելով «հայնճական և անվայել»: «Այդ հին երգը թողնում ենք խավարամիտներին և բթամիտներին ազատորեն երգելու, — գրում է նա: Շչեդրինը, ինչպես ամեն մի զգայուն գրող, չէր կարող ժամանակակից ապականությունը, ախտերը և բթամտությունը չդրոշմել իր գրվածքներում իրանց պատշաճ անվանակոչություններով»:

Խոսելով Շչեդրինի անմահ երկերի մասին ընդհանրապես, Արծրունին գրում է. «Այդ բոլոր գրվածքների հրաշալի տիպերից շատերը դարձել են ռուս հասարակության մեջ կոչական անուններ: Շչեդրինի մահը մի անուղղելի հարված է ռուս գրականության համար... Գլորիայից իր անհասանելի բարձրությունից մի գրականական հսկա»¹⁵: Սալտիկով-Շչեդրինը Արծրունու համար մեծ գրողի տիպար է, իսկ նրա ստեղծագործությունը՝ պայքարի հատուկ դեմք: Եվ հայկական կյանքի հետամնացության, ռեակցիայի դեմ պայքարելիս, հակառակորդների դեմ բանավիճելիս Արծրունին հաճախ էր դիմում մեծ երգիծաբանի հատուկ խոսքին:

«Ընթերցող, կարդացի՞ր ռուս նշանավոր գրող Շչեդրինի վերջին պատկերները ժողովրդական կյանքից, կամ նրա պատումները, ինչպես օրինակ

¹⁴ Նույն տեղում, 1886, № 62:

¹⁵ Նույն տեղում, 1889, № 49:

«За рубежом» գեղեցիկ գրվածքը, — գրում է Արծրունին մի ֆելիետոնում: — Այստեղ պատկերված է մի պրոֆեսորի տիպ, որը դասախոսություններ կարգալիս արդարացնում է մարմնական պատիժները՝ «կնուտը, մտրակը, որպես ամենաբարձր արդարության նշան, հանցավորին բարոյականացնող և ազնվացնող միջոց»:

«Մեր համալսարանի պրոֆեսորից, — ասում է Շչեդրինը, — չէր պահանջվում, որ նա լուսավորության լապտերը ձեռքին առաջնորդեր իր լսողներին, նա պաշտոնյա էր, նա ստանում էր իր ոռճիկը, նրա համար, որ ասի այն, ինչ նրան հրամայված էր»¹⁶: Մեծ երգիծաբանի կերտած խավարամուլ, հետադեմ պրոֆեսորի տիպը հիշատակելով, Արծրունին դատապարտում է այդ կարգի մարդկանց, որոնք հլու հնազանդությանը կատարում են այն, ինչ վերևից է թելադրվում: Գրողը պահանջում է, որ պրոֆեսորը իր բարձր ամբիոնից լուսավորություն քարոզի, սակայն նա հետադիմության մունետիկ է, գրողը պահանջում է, որ նա հակադրվի մտրակի իշխանությանը՝ բռնությանը, սակայն նա սոսկ պաշտոնական կարգերի՝ վեբելի կամակատարն է: Մի այլ առիթով, առարկելով նրանց, ովքեր մեղադրում են հայ հասարակությանը, որ նա չի հաճախում տեղական կյանքից վերցրած ներկայացումներին, Արծրունին դարձյալ դիմում է Շչեդրինին. «Մենք երկար ժամանակ ծեծով, ճորտության ճնշումով և հայհոյանքներով ինքներս բթացրինք ամբոխը և այժմ պահանջում ենք, որ հանկարծակի արձագանք տա մեր մարդկային քաղաքացիական ամենավսեմ գաղափարներին»: Տնույնը և մեզ մոտ, — շարունակում է իր միտքը Արծրունին, — մենք երկար ժամանակ հասարակությանը ընտելացրել ենք ումանտիկական պիեսներով, փտած գործերով, ընտելացրել ենք հայ հասարակությանը սրին, թույնին, ատրճանակին, ցիրկային տեսարանների և զարմանում ենք, որ հասարակությունը չի գալիս թատրոն, երբ տեղական կյանքից ինքնուրույն պիես է տրված, երբ առանց թույնի և ատրճանակի արձակման ջանում է հանգիստ կերպով առաջարկել այս կամ այն հասարակական խնդրի լուծումը»¹⁷:

Արծրունին Շչեդրինի կերտած տիպերը հաճախ օգտագործել է իր ֆելիետոններում: Նա գտնում է, որ ժողովրդի ծոցից դուրս եկած շահագործողները նույնքան վայրագ կեղեքիչներ են, որքան և բուրժուազիայի: Բնչպես Ռուսաստանում, Շչեդրինի տիպերում ամբոխից դուրս եկած Կոլուպաժենները և Ռաուդակաճենները ամենատիպիկ, ամենակատաղի հափշտակիչներն են, ժողովրդի կեղեքիչները, այնպես էլ մեզանում»¹⁸, — գրում է Արծրունին:

Սալտիկով-Շչեդրինի սուր, անողոք, մինչև արմատները մերկացնող երգիծանքում Արծրունին տեսնում էր իրականության դեմ ուղղված հզոր ուժ, որ նա համարում էր բացասական ուղղության վառ արտահայտություն: Խավարի, հետամնացության և կնուտի կարգերի մերկացման համար միշտ հարկավոր են Շչեդրինի պես հզոր անհատականություններ: Պատահական չէ, որ նա իր ֆելիետոններից մեկում տեսնում է. «Ա՛խ, Շչեդրին, Շչեդրին, ո՛ւր ես դու...»¹⁹:

Նույն սիրով և իմացությամբ Արծրունին տվել է Ալ. Գոնչարովի և Ն. Նեկ-

16 Նույն տեղում, 1880, № 212:

17 Նույն տեղում, 1881, № 238:

18 Նույն տեղում, 1886, № 106:

19 Նույն տեղում, 1890, № 31:

րասովի ստեղծագործությունների սեղմ բնութագիրը: «Մենք բոլորս մեր երիտասարդության ժամանակ,— գրում է Արծրունին 1891 թ. Գոնչարովի մահվան առթիվ գրված հոդվածում,— կրթվեցանք Գոնչարովի վեպերով, որոնք ներկայացնում էին մի շատ առատ նյութ քննադատության համար և պարունակում էին իրանց մեջ կենդանի հասարակական տիպեր ուս կյանքից: Ո՞վ չի հիշում հանդուցյալի «Обломов»-ը, որ դարձել էր ընդհանուր գործածական Обломовщина անունով դադափարը, որը համանշան է հասարակական ժողովրդական. անհոգության, անշարժության, անփութության գաղափարի: Հանդուցյալի յուրաքանչյուր նոր վեպը նոր մտքեր էր հարուցանում, հասարակության մեջ տաք վիճաբանություններ էր ծնեցնում»: Արծրունին նշում է Գոնչարովի վեպերի, հատկապես «Օբլոմովի» ճանաչողական բացառիկ մեծ արժեքը, վիպասանի երկերի «վերին աստիճանի կրթիչ ներգործությունը ուս երիտասարդության վրա», երկեր, որոնք առատ նյութ էին տալիս Բելինսկուն և Դոբրոլյուբովին իրանց քննադատության համար²⁰:

Մի այլ առիթով, բնորոշելով տիպ հասկացությունը, որպես հազարավոր միանման բնավորությունների ճավափակաճ արտահայտություն, Արծրունին նորից հիշատակում է Օբլոմովի կերպարը: «Եթե Գոնչարովը համոզված չլիներ, որ իր ժամանակ Ռուսաստանը լի է անհոգ, դեպի հասարակական գործերն անփութ, եռանդից զուրկ, հիասթափված, իրանց ամբողջ կյանքը մեջքի վրա պռկած անցկացնող փալաւ երիտասարդությամբ, նա չէր էլ կարող ստեղծել Օբլոմովի պես մի կենդանի տիպ, որը դարձել է և մինչև այժմ հիշվում է որպես ընդհանուր ճասագրակ (нарицательный) անուն՝ „Обломовщина“²¹:

Ինչպես տեսանք, ուս մեծ գրողների մասին գրած հոդվածներում, Արծրունին միշտ ընդգծված ներկայացնում է նրանց ստեղծագործությունների ազգային բնույթը, ռեալիստական մերկացումներն ու քննադատական ոգին, առդիական հնչողությունը և այդ ամենով պայմանավորված հասարակական-դաստիարակչական նշանակությունը: Այս նույն մոտեցմամբ էլ քննադատը գնահատել է նեկրասովի ստեղծագործությունը: Արծրունին նեկրասովին համարում է «Երևելի», «ճանճառեղ բանաստեղծ», իսկ նրա լավագույն ստեղծագործությունները՝ «աստվածային բանաստեղծություններ, որոնք հսկայական ներգործություն ունեն հասարակության վրա: «Ամենքը Ռուսաստանում հիացած են նեկրասովի գրվածքներից,— գրում է Արծրունին,— ամեն մարդ նրա ոտանավորներից մեծ մասը գիտե. այդ բանաստեղծությունները քիչ չնպաստեցին և ուս ժողովրդի կյանքի և բարոյական լավ կողմերի հետ ծանոթանալուն, նույնիսկ իրանց տխրեցնելով քիչ չնպաստեցին միլիոնավոր հորտերի ազատության գործին»:

Բնորոշ է և այն փաստը, որ Արծրունին Շչեդրինի և նեկրասովի ստեղծագործությունների մասին խոսում է ոչ միայն հատուկ հոդվածներում, այլև առաջին հայացքից անմեղ թվացող ֆելիետոններում: Ռուս մեծ գրականության հանճարեղ դեմքերի մասին գրելով, բացահայտելով նրանց ստեղծագործությունների հասարակական պաթոսը, մտրակիչ ուղղությունը՝ ռեալիզմը, Արծրունին կարծես հուշում էր. տեսե՛ք թե ինչպիսի գրողների կարիք է զգում հա:

20 Նույն տեղում, 1891, № 105:

21 Նույն տեղում, № 149:

իրականությունը, ինչ ձանապարհով պետք է զարգանա հայ նոր գրականությունը:

XIX դ. ռուս գրականության արտակարգ ծաղկմանը, ըստ Արծրունու, նըպաստում էր քննադատական միտքը:

1890 թ. գրած «Լուսաբերական բանակրիվի օգուտը» հոդվածում Արծրունին նշում է, որ բանավեճը նպաստում է գրականության պատմության հարցերի լուծմանը, որ նույն երևույթը օտար չի եղել նաև ռուս գրականությանը. «Բանակրիվի միջոցով էր գլխավորապես, որ ռուսաց գրականության ամենապայծառ ուժերը, ինչպես օրինակ Բելինսկին, Դոբրոլյուբովը և այլն (հավանաբար նկատի ունի Չերնիշևսկուն, որի անունը այդ ժամանակ արգելված էր տալ— Ծ. Պ.) կարողացան արտահայտել իրանց ամենալավ, ամենանշանավոր գաղափարները»²²:

Ռուս մեծ գրողների ստեղծագործություններին տրված Արծրունու ձիշտ բնորոշումներն ու փայլուն գնահատականները վկայում են քննադատի հարուստ գիտելիքները, բարձր ճաշակը, քննադատական ակնհայտ կարողությունները, ինչպես նաև քաջատեղյակությունը ռուս գրականությանն ու ռուս իրականության կարևոր իրադարձություններին:

Արծրունուն գերում էր ռուս գրականության թափը և արդիական հնչեղությունը, ընդգրկման խորությունը և մերկացնող ռեալիզմը, գաղափարական հարստությունը և պատկերավորման վարպետությունը: Նրա կարծիքով դրան պետք է ձգտի նաև հայ գրականությունը:

ГРИГОР АРЦРУНИ И РУССКАЯ ЛИТЕРАТУРА

Е. М. ПЕТРОСЯН

Доктор филологических наук

Резюме

С самого начала своей общественной деятельности редактор газеты «Мшак» Григор Арцруни выступал за расширение и укрепление армяно-русских политических, культурных и литературных связей. Его перу принадлежит ряд статей, освещающий творчество Тургенева, Гончарова, Островского, Некрасова, Щедрина. Мысли, высказанные им о Пушкине, Лермонтове, Грибоедове, Гоголе, и по сей день не потеряли своей свежести.

Гр. Арцруни высоко ценил широкий размах развития русской литературы, ее актуальность, а также глубину охвата, реалистический дух, идеологическое богатство и мастерство произведений русских классиков. Он находил, что именно к этому должна стремиться и армянская литература.

²² Նույն տեղում, 1890, № 46: